ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 նոյեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

155
(2821)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՐԵՎՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐՆ ԵՆ

2024թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատակազմին նախատեսվում է հատկացնել 1 մլրդ 771 մլն 633 հազար դրամ: Այս մասին երեկ Ազգային ժողովում 2024թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ հայտարարեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խաչատուր Պողոսյանը: Նա նաեւ հավելեց, որ հատկացվող բյուջեի 82 մլն դրամը նախատեսվում է աշխատակազմի համար նոր ցանցային սարքավորումների եւ հեռահաղորդակցության համակարգերի ձեռքբերման համար, իսկ մյուս մասը կծախսվի նախագահի ներկայացուցչական ծախսերի վրա: Հիշեցնենք, որ 2022 թվականի բյուջեի քննարկմանը «Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրով տարեկան պլանը հաստատված էր 1 մլրդ 602 մլն 527 հազար դրամ: Նախորդ տարի «Հանրապետության նախագահի գործունեություն եւ ներկայացուցչականության ապահովում» միջոցառման տարեկան պլանը հաստատված է եղել 1 մլրդ 598 մլն 700 հազար դրամ: «Հանրապետության նախագահի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման տարեկան պլանը հաստատված է եղել 3 մլն 760 հազար, 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, Կառավարության որոշմամբ, այն ավելացվեց 20 մլն դրամով: Ստացվում է, որ 2024 թվականի բյուջեի քննարկման ընթացքում նախագահի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավմանն ուղղված ֆինանսական միջոցներն ավելացվել են 82 միլիոնով: Ֆինանսական բյուջեն ավելացնում են, սակայն նախագահի գործունեությունը չի ավելանում: Ներկայացուցչական ծախսեր կատարել սիրող իշխանությունների որոշումները ստորագրող նախագահը իրեն հատկացված ֆինանսական միջոցներն ուղղում է միայն իր արտագնա այցերին: Օրինակ՝ մեր նախագահը շատ է սիրում այցելել իր ընկերներին արտասահման կամ հայտնի անձանց հոգեհանգստի արարողություններին, ինչպես, օրինակ, Անգլիայի թագուհի Եղիսաբեթ II-ի հոգեհանգիստը: Ստացվում է, որ նախագահ Խաչատուրյանը եւ նրա աշխատակազմը տեղյակ են միայն ֆինանսներ ստանալուց եւ ծախսելուց, իսկ երկրում տիրող իրավիճակից նախագահը կամ տեղյակ չէ, կամ էլ շուտով կտեղեկանա մամուլից, եւ հուսով ենք՝ գոնե կմիջամտի կամ մի հայտարարությամբ հանդես կգա:



Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի փետրվարի 3-ին՝ Ալեն Սիմոնյանի որոշմամբ: Մինչ այս պաշտոնին նշանակվելը Առաքելյանը եղել է ԱԺ նախագահի օգնականը: Հայտարարագրում պաշտոնատար անձի պաշտոնը նշված է որպես օգնական, սակայն նա ԱԺ նախագահի օգնական եղել է 2022 թվականին: Մեզ չհաջողվեց Դավիթ Առաքելյանի կենսագրության մասին որեւէ տվյալ գտնել, այդ պատճառով էլ այլ մանրամասներ չենք ներկայացնում, սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքից տեղեկանում ենք, որ Դավիթ Առաքելյանը սեփական անշարժ գույք չունի եւ բնակվում է այլ անձին սեփականությամբ պատկանող բնակարանում, որը 90 օրից ավելի շահագործվում է իր կողմից: Առաքելյանը 2021 թվականին նվիրատվություն է ստացել 2016 թվականի արտադրության, Toyota մակնիշի մեքենա: 2022 թվականի հաշվետու տարվա վերջին նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 175 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 29 հազար դոլար, 8 մլն 500 հազար դրամ, 7 հազար եվրո եւ 180 հազար ռուբլի: Թվում է, թե ամեն ինչ կարգին է, որ բոլորն էլ կարող են այսքան մեծ քանակի կանխիկ գումարներ ունենալ, սակայն ուշագրավն այն է, որ Առաքելյանի տարեկան եկամուտները կազմում են 9 մլն 383 հազար դրամ, իսկ նրա կանխիկ դրամական միջոցները 2,5 անգամ ավել են՝ գրեթե 23 մլն դրամ: Կարելի է վարչապետ Նիկոլ Փաշինյանին ասել, որ «պոզով-պոչով կոռուպցիան» հենց իր կողքին է, քանի որ Առաքելյանը հայտարարագրում բաց եւ թափանցիկ չի նշել ունեցած ֆինանսական միջոցների աղբյուրները: Դավիթ Առաքելյանի եկամուտների 8 մլն 487 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, իսկ 895 հազար դրամ ստացել է ՀՀ նախագահի աշխատակազմից:

Այսօր հայտնի դարձավ, որ Երեւանի մի շարք վարչական շրջանների ղեկավարներ, այդ թվում՝ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը վերանշանակվել են իրենց պաշտոններում: «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ գրել էր, որ ՔՊ-ում որոշում կա Երեւան վարչական շրջանի ղեկավարի պաշտոնում նշանակել ավագանու՝ իր սկանդալային հայտարարություններով հայտնի անդամ Նուարդ Վարդանյանին, որը նշանակվել է ավագանու ՔՊ խմբակցության քարտուղար: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ում թեժ քննարկումներից հետո այդ որոշումը փոխվել է: Այսպիսով, նախապես ՔՊ-ում որոշված է եղել, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը, որը Տիգրան Ավինյանի մտերիմ ընկերն է, ամբողջությամբ տապալել է իր ոլորտը եւ պետք է ազատվի այդ պաշտոնից: Նույնիսկ որոշվել էր, որ Սամվել Ղուկասյանը կնշանակվի քաղաքապետի խորհրդական կամ ԲՏԱ նախարարությունում պաշտոնի: Օրեր հետո իրավիճակ փոխվեց: Հիշեցնենք, որ Սամվել Ղուկասյանը Տիգրան Ավինյանի մտերիմ ընկերն է, նրան մեկ տարի առաջ ԱՄՆ-ից կանչել են, որ աշխատանք տան: Անգամ նիստերից մեկում Նիկոլ Փաշինյանն իր նախնական համաձայնությունը տվել էր, որ Սամվել Ղուկասյանին պաշտոնանկ անելուց հետո այդ պաշտոնում նշանակվի Նուարդ Վարդանյանը: Պարզվում է, որ Նուարդ Վարդանյանի՝ Երեւանի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնում չնշանակվելու որոշման մեջ կարեւոր դեր են ունեցել նաեւ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումները, որտեղ մենք անընդհատ հիշեցնում էինք Նուարդ Վարդանյանի այդ սկանդալային հայտարարությունները, կենսագրական կոռուպցիոն տարրեր պարունակող տվյալները, որի արդյունքում ի վերջո որոշումը փոխվեց:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի հետեւանքով Արցախից բռնի տեղահանված պատգամավորներից հետաքրքրվել՝ ինչու Արցախի բռնի զավթումից հետո ՀՀ-ում Արցախի Ազգային ժողովի արտահերթ նիստ չեն հրավիրում եւ ինքնորոշման հարց բարձրացնում: «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավոր Արամ Հարությունյանը, մեր այս հարցին ի պատասխան, ասաց, որ դեռ փակ քննարկումներ են ունենում միայն: «Արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ պետք է հանդես գան կամ պատգամավորները, կամ ԱԺ ղեկավարությունը, բայց այս պահին դեռ փակ քննարկումներ են տեղի ունենում Արցախի եւ Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակի մասով. շատ հարցեր դեռ ոչ հրապարակային են քննարկվում»,-ասաց նա: Ըստ պատգամավորի՝ այս իրավիճակում հրապարակային շատ բան ասել չեն կարող. «Ժամանակը կգա, կխոսենք, հիմա շատ բան չենք կարող դեռ խոսել. եթե հրապարակային լիներ, կխոսեինք»: Նկատենք, որ Արցախի բոլոր պատգամավորները միաբերան ասում են, որ հիմա դեռ փակ քննարկումների մեջ են: Տպավորություն է, որ նրանք ինչ-որ բանի են սպասում եւ առաջիկայում հստակ քայլեր նախաձեռնելու մտադրություն չունեն:

ԶՐՈՒՅՑ

Ե՞ՐԲ ԿՎԵՐԱՆԱ ԸՆՏՐՈՎԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է ոստիկանների գործողություններին: Խոսքը հատկապես բողոքի ակցիաների մասին է, երբ նշվում է, որ ոստիկանները հաճախ անհամաչափ ուժ են կիրառում:

Ղազարյանը կարծում է, որ ոստիկանները միջամտում են միայն այն ժամանակ, երբ ակցիայի մասնակիցներն են հրահրում:

-Արդա՞ր է, երբ պատգամավորին ծեծում են, բռնություն են կիրառում, իսկ հայրիկը ընդամենը վեճի էր բռնվել, նրա նկատմամբ գործ հարուցվեց:

-Հիմա քրեական վարույթ է ընթանում, ես այդ հարցին ինչպե՞ս կարող եմ պատասխանել:

-Պարոն Ղազարյան, ընտրովի արդարադատություն է տեղի ունենում, դրա համար են պարբերաբար Ներքին գործերի նախարարությանը մեղադրում՝ ասելով, որ զինվորի հայրը հայհոյեց պատգամավորին, միանգամից բռնեցին, կալանավորեցին:

-Եռաբլուրի դեպքով կա քրեական վարույթ: Ճիշտ կլինի, որ այդ հարցն ուղղեք Քննչական կոմիտեին:

-Ըստ Ձեզ՝ որպես ներքին գործերի նախարարի, ե՞րբ պիտի վերջ դրվի այս ընտրովի արդարադատությանը:

-Ես ցավում եմ, որ այդ միջադեպը եղավ, որպես մարդ ես իրապես ցավում եմ:

-Վերջ կլինի՞ այս ընտրովի արդարադատությանը, պարոն Ղազարյան: Վստահ լինե՞նք, որ մեր իրավապահ համակարգն այլևս ՔՊ-ականներին չի ծառայի եւ ամեն ինչ կանի օբյեկտիվ եւ արդար:

-Դուք տեսե՞լ եք նման բան մեզնից: Օրինակ՝ հանրահավաքների կամ բողոքի ակցիաների ժամանակ եթե կազմակերպիչները չեն հրահրում, ոստիկանները չեն գնում որեւէ քայլի: Տեսել եք, չէ՞, թե ինչպես էին քարեր շպրտում կառավարության շենքի ուղղությամբ, ինչպես էին ավտոպահեստամասեր շպրտում, շշեր շպրտում:

-Հասկանալի է, բայց կան իրավիճակներ, որոնք հակառակն են ցույց տալիս, պարոն Ղազարյան:

-Դե Դուք մեր տեսանկյունից էլ նայե՛ք:

-Մենք համադրում ենք փաստերը: Պարոն Ղազարյան, իսկ Եռաբլուրում, երբ ծնողների ձեռքերից, ոտքերից քաշեցին, տարան, դեռեւս ոչ մի ոստիկան չի՞ կալանավորվել:

-Ինձ դուր չի գալիս, որ Դուք այդ թեման անընդհատ խմորում եք:

-Պարոն Ղազարյան, մեզ համար զոհված տղաների ծնողներն են, ախր:

-Մի բան ասեմ. ես՝ որպես հայ, որպես ծնող, կարող եմ ասել, որ իմ տղան էլ է գնացել այնտեղ, չգիտեմ՝ ինչքանով եք դուք տեղյակ:

-Տեղյակ չենք, պարոն Ղազարյան, սակայն շնորհակալ ենք նաեւ իրեն մեր այսօրվա կյանքի համար, բայց հարցը այլ է, պարոն Ղազարյան: Ծնողներին ձեռք ու ոտքից բռնած տանեն ու ոչ մի բա՞ն:

-Կա քրեական վարույթ, օրինակ՝ Պողոս Պողոսյանին կճանաչեն մեղավոր, պատիժ կստանա:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆԸ՝ ԿՌՎԱԽՆՉՈ՞Ր ⇨

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ արդեն տեւական ժամանակ է՝ Նիկոլ Փաշինյանը տեղափոխվել է նախագահական նստավայր՝ Բաղրամյան 26, եւ զբաղեցրել նախագահի աշխատասենյակը, քանի որ կառավարության շենքում հերթական վերանորոգումն է իրականացվում:

Գրել էինք նաեւ, որ վերանորոգումը սկսվել է դեռեւս 2023 թվականի մայիսի 8-ին եւ պիտի ավարտվեր սեպտեմբերի 5-ին, սակայն, մեր տեղեկություններով, չնայած արդեն նոյեմբեր ամիսն է, բայց Փաշինյանը շարունակում է դեռ մնալ Բաղրամյան 26-ում: Տեղեկացանք՝ պատճառն այն է, որ Նիկոլ Փաշինյանն իրեն ավելի հարմարավետ ու պաշտպանված է զգում նախագահականում, քան իր նստավայրում, դրա համար էլ ձգձգվում է նրա տեղափոխությունը:

Ինչպես գիտենք, կառավարության շենքի դիմաց գրեթե ամեն օր բողոքի ակցիաներ են տեղի ունենում, թե՛ ընդդիմադիրները, թե՛ տեղահանված արցախցիները, թե՛ այս իշխանություններից դժգոհ քաղաքացիները սովորաբար իրենց ակցիան իրականացնում են այնտեղ: Ահա սա է պատճառը, որ Նիկոլ Փաշինյանը չի ցանկանում տեղափոխվել կառավարություն՝ իր աշխատասենյակ:

Այս ամենից, սակայն, դժգոհ է Վահագն Խաչատուրյանը, որը չի կարողանում իր աշխատասենյակ վերադառնալ ու ստիպված այլ աշխատասենյակում է նստում այս ընթացքում:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Մոտ մեկամսյա դադարից հետո «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վերջին օրերին հաճախակի վարչության նիստեր է անում:

Նախ նիստ էին արել երկուշաբթի օրը, վարչության որոշմամբ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության երիտասարդական կառույցի խորհրդի նախագահ էր նշանակվել Գոհար Սաֆարյանը, իսկ քարտուղար՝ Պապին Բաղդասարյանը:

Երեկ նույնպես Քաղաքացիական պայմանագիրը նիստ էր արել. ըստ պաշտոնական հաղորդագրության՝ Եղեգնաձորի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի պաշտոնում հաստատվել էր Մուշեղ Ներսիսյանի թեկնածությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վարչության նիստերը երկար չեն տեւել, եւ քննարկվել են բացառապես ներկուսակցական հարցեր:

Տեղեկացանք նաեւ, որ Արցախից բռնի տեղահանվածների խնդիրները կամ անվտանգային այլ հարցեր եւս չեն քննարկվել:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՐԵԼ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանի մասով որոշում է կայացրել եւ մերժել նրա պաշտպանի բողոքը: Արդյունքում Բազեյանը կշարունակի մնալ կալանքի տակ: Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 29-ին Ալբերտ Բազեյանը կալանավորվեց 2 ամսով, եւ նրա կալանքի հարցով բողոք էր ուղարկվել ՀՀ վերաքննիչ դատարան, դատավոր Ռուբիկ Մխիթարյանը մերժել է նրա խափանման միջոցը փոխելու՝ պաշտպանների միջնորդությունը: Նշենք, որ Մխիթարյանը այն դատավորն է, որին Կարեն Անդրեասյանը կարգել է որպես ՀՀ վերաքննիչ դատարանում «իր աչք ու ականջներ»: Հավելենք, որ, ըստ ԱԱԾ-ի, «Խաչակիրներ» ռազամահայրենասիրական ՀԿ անդամները, ինչպես նաեւ Ալբերտ Բազեյանը եւ այլ անձինք, ունենալով հակաիշխանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին: Հանցավոր խմբի անդամները ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ կապը խլացնող սարքեր, հանցանքի կատարումը հեշտացնող միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ դիտավորությամբ ստեղծել են այլ պայմաններ՝ այդկերպ նախապատրաստվելով կատարել նախնական համաձայնությամբ, խմբի կազմում իշխանության յուրացում, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, նախապատրաստվող առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել եւ խափանվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

ՉԵՆ ՀԱՆԲԱՅՆԱՑՆՈՒՄ

ՔՊ-ական պատգամավորները շարունակում են պետբյուջեի հաշվին գործուղումների մեկնել:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ նոյեմբերի 8-11-ը Բրյուսել կգործուղվեն Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատգամավորներ Արման Եղոյանը եւ Սոնա Ղազարյանը:

Թե ինչ օրակարգով են ՔՊ-ականները մեկնում Բրյուսել, հայտնի չէ. ԱԺ նախագահի համապատասխան որոշման մեջ ոչինչ նշված չէ այդ մասին:

Նկատենք, որ նախկինում մշտապես որոշման մեջ հստակեցված է եղել, թե ինչ օրակարգով են գործուղումների մեկնում պատգամավորները եւ ինչ հանդիպումներ են ունենալու, բայց վերջերս բաց ու թափանցիկ կառավարության մասին օրուգիշեր խոսող ՔՊ-ականները անգամ հարկ չեն համարում իրենց գործուղումների օրակարգը հանրայնացնել:

ՆՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿ՝ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ

ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելությունը Եղեգնաձորում բացել է իր գլխամասային գրասենյակը: Առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը հայտարարել է, որ տարածաշրջանն արժանի է տեւական խաղաղության եւ կայունության, հույս հայտնել, որ միասին կկարողանան նպաստել այդ նպատակի իրականացմանը:

Մարկուս Ռիտերն ընդգծել է, որ առաքելության գործունեության 8 ամիսների ընթացքում դրան միացել է Եվրամիության 23 երկիր՝ գործուղելով 93 դիտորդի: Գրասենյակի բացման արարողության ընթացքում դիտորդական առաքելության ղեկավարը հայտնել է, որ այս պահին իրենք կարողանում են դիտորդություն իրականացնել Հայաստան-Ադրբեջան սահմանի երկայնքով:

«Սահմանային իրավիճակը շատ հանգիստ է, մեր դիտորդները, որոնք ամեն օր շրջում են, չեն արձանագրել լարվածության աճ: Ակնհայտ է, որ հանգիստ շրջան է: Մենք ունենք վեց գրասենյակ ՀՀ-ում, մեր դիտորդները շրջում են ոչ միայն սահմանային գոտում, այլեւ դրան մոտ գտնվող համայնքներում ու բնակավայրերում, որոնք հակամարտության ազդեցությունն իրենց վրա են զգում: Կարող եմ ասել, որ դիտորդների 1/3-ը գնում է սահման, իսկ 2/3-ը՝ համայնքներ: Դիտորդական առաքելության մանդատի ընդլայնման եւ դիտորդների թվի մեծացման հարցը պետք է քննարկվի Բրյուսելում այս տարեվերջին. մենք սպասում են արդյունքներին»,- ասել է ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԻՄՆԱՆՊԱՏԱԿ

«Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատումը Եվրամիության հիմնական նպատակներից մեկն է»,- հայտարարեց Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսը:

«Հոկտեմբերի սկզբին Գրանադայում տեղի ունեցած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում Եվրամիությունը կրկին դատապարտել է Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ Ադրբեջանի ռազմական գործողությունը եւ ընդգծել է Հայաստանի եւ Ադրբեջանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի անհրաժեշտությունը: Մենք շարունակում ենք նվիրված լինել այս ջանքերին: Մեր անմիջական ուշադրության կենտրոնում են Լեռնային Ղարաբաղի ավելի քան 100 հազար բնակիչների մարդասիրական կարիքները, որոնք ապաստան են գտել Հայաստանում»,- ասաց նա:

Դեսպանը հավելեց, որ ԵՄ-ն եւ Հայաստանը վճռական են ամրապնդելու իրենց կապերը՝ աշխատելով Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի եւ ԵՄ տնտեսական եւ ներդրումային պլանի ամբողջ ներուժը բացահայտելու ուղղությամբ:

ԳՐԱԴՌՈՒՄ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ատյանաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավար Դորոտա Գլուշի-Սուլիգան, շնորհակալություն հայտնելով արցախահայության հումանիտար վիճակի, Արցախին եւ Հայաստանին սպառնացող անվտանգային մարտահրավերների մասին ահազանգող նամակներիս, վերահաստատել է Եվրոպական Միության աջակցությունն արցախահայերի իրավունքների պաշտպանությանը եւ Հայաստանի անվտանգությանը: Նա, մասնավորապես, գրել է. «...Եվրամիությունն ուշադրությամբ հետեւում եւ արձագանքում է տարածաշրջանում ընթացող զարգացումներին: ԵՄ-ն ամենաբարձր մակարդակով ներգրավված է՝ օգնելու մեղմել խաղաղ բնակչության վրա ներգործող հումանիտար ազդեցությունը եւ խուսափել իրավիճակի հետագա վատթարացումից:

Եվրամիությունը դատապարտում է սեպտեմբերի 19-ին եւ 20-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ իրականացված ռազմական գործողությունը, որը պատճառ դարձավ ավելի քան 100500 փախստականների՝ դեպի Հայաստանի Հանրապետություն արտահոսքի: Մենք ցավում ենք այս էսկալացիայի հետեւանքով կրած զոհերի եւ մարդկային կորուստների համար:

Եվրամիությունը կոչ է անում Ադրբեջանին ապահովել արցախահայերի իրավունքներն ու անվտանգությունը, այդ թվում՝ տեղահանվածների համար իրենց տներ վերադառնալու իրավունքը: Ղարաբաղի հայերի մշակութային ժառանգությունն ու սեփականության իրավունքները պետք է պաշտպանվեն:

Հաշվի առնելով տարածաշրջանում հրատապ հումանիտար կարիքները՝ Եվրամիությունը եւ անդամ երկրները մարդասիրական օգնություն են մոբիլիզացրել Հայաստանում գտնվող տեղահանվածների համար: ՀՀ կառավարության խնդրանքով՝ ԵՄ-ն ակտիվացրել է քաղաքացիական պաշտպանության իր մեխանիզմը: Հոկտեմբերի 5-ին նախագահ Ֆոն դեր Լեյենը հայտարարեց 10,45 միլիոն եվրո արժողությամբ հավելյալ մարդասիրական օգնության փաթեթի մասին: Ավելին՝ հանձնաժողովը հայտնեց Հայաստանին 15 միլիոն եվրո բյուջետային աջակցության մասին՝ սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու եւ սննդամթերքի ու վառելիքի ձեռք բերմանն աջակցելու համար: Հայաստանն օգուտներ կստանա նաեւ «ԵՄ-ն հանուն խաղաղության» ծրագրից, որը համալրվելու է լրացուցիչ 800,000 եվրոյով:

Եվրամիության արտաքին գործերի նախարարները մտադիր են քննարկել Հայաստանի անվտանգությանն ու տոկունությանը, ինչպես նաեւ ժողովրդավարական ինստիտուտների կայունությանն աջակցելուն ուղղված հետագա գործողությունները: Միեւնույն ժամանակ, Հայաստանում Եվրոպական Միության առաքելությունը շարունակում է վերահսկել անվտանգային իրավիճակն Ադրբեջանի հետ միջազգային սահմանի հայկական կողմում:

ԵՄ-ն հավատարիմ է մնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցությունների անհապաղ վերսկսմանն աջակցելուն՝ խաղաղության պայմանագրի կնքման հեռանկարով: Այդ նպատակով մենք սերտ կապի մեջ ենք Բաքվի եւ Երեւանի համապատասխան մարմինների հետ»,- նշել է Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավարը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽՈՄՆԱԿԸ՝ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ

Վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանն արձակուրդում է:

«Ժողովուրդ» օրաթերթը Կառավարությունից տեղեկացավ, որ, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Նազելի Բաղդասարյանը 10 աշխատանքային օր տեւողությամբ արձակուրդ է մեկնել՝ հոկտեմբերի 24-ից մինչեւ նոյեմբերի 6-ը ներառյալ:

ՆԵՐԿԱ ՉԻ ԵՂԵԼ

ԱԺ-ում երեկ շարունակվում էին «Բյուջե-2024» նախագծի քննարկումները:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը հայտնում է, որ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը ներկա չի եղել նախագծի քննարկումներին:

ՆՇԱՆԱԿՎԵՑ ՏՆՕՐԵՆ

«Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ միակ բաժնետեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու որոշմամբ՝ 2023թ. նոյեմբերի 1-ից «Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ տնօրենի պաշտոնը կրկին ստանձնել է պրոֆեսոր, բ.գ.դ. Արմեն Գերասիմի Չարչյանը. հայտնում է բուժկենտրոնի մամուլի ծառայությունը:

Հիշեցնենք՝ Արմեն Չարչյանը հոկտեմբերի 23-ին վայր էր դրել պատգամավորական լիազորությունները:

ՊՐԻԳՈԺԻՆԻ ՈՐԴԻՆ ՈՒ «ՎԱԳՆԵՐԸ»

Սանկտ Պետերբուրգի գործարար Եվգենի Պրիգոժինի որդին՝ Պավել Պրիգոժինը, ռուսական գվարդիայի կազմում դարձել է «Վագներ» մասնավոր ռազմական ընկերության (PMC) ղեկավար: Այս մասին 59.ru պորտալին հայտնել է Պերմի մարզում կազմակերպության ներկայացուցիչը:

Ինչպես հայտնի է դարձել պարբերականին, վագներցիներն այժմ ռուսական գվարդիայի մաս են կազմում եւ նրա ստորաբաժանումն են:

Նա նշել է, որ կրկին սկսել են կամավորներ հավաքագրվել «Վագների» կազմում: Ըստ կազմակերպության ներկայացուցչի՝ կա մեկ տարբերություն: «Մենք տանում ենք միայն քաղաքացիական անձանց, ոչ թե ազատազրկման վայրերից»,- նշել է 59.ru-ի զրուցակիցը:

Որոշ Telegram ալիքներ տեղեկատվություն են տարածել, որ պայմանագրեր կկնքվեն բոլորի հետ, որոնք ցանկանում են դառնալ «Վագներ»-ի անդամ: Նրանք պատրաստ են պայմանագրեր ստորագրել 20-ից 55 տարեկան քաղաքացիների հետ:

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Անալենա Բերբոքը նոյեմբերի 3-ին կայցելի Հայաստան, որից հետո կմեկնի Ադրբեջան: Այս մասին Բեռլինում լրագրողներին հայտնել է Գերմանիայի ԱԳՆ ներկայացուցիչը:

«Նախարարը ուրբաթ առավոտյան կմեկնի Հայաստան եւ Ադրբեջան: Նախ նա կժամանի Երեւան, որտեղ կհանդիպի իր գործընկեր (խմբ.՝ Արարատ) Միրզոյանի հետ», - Գերմանիայի ԱԳՆ խոսնակի խոսքերն է մեջբերում «ՏԱՍՍ»-ը:

Ըստ հրապարակման՝ Բերբոքը նախատեսում է նաեւ այցելել Հայաստանում Լեռնային Ղարաբաղի փախստականների տեղավորման կենտրոն: Նոյեմբերի 4-ին նա կուղեւորվի Բաքու, որտեղ նախատեսված են բանակցություններ Ադրբեջանի ԱԳՆ ղեկավար Ջեյհուն Բայրամովի հետ, ինչպես նաեւ հանդիպում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

«Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը հանդես է գալիս տարածաշրջանում կայուն խաղաղության, քաղաքական եւ տնտեսական դիվերսիֆիկացիայի օգտին», - ասել է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը:

ՊԱՏԱՍԽԱՆԵՑ

ՔՅԱՐԱՄՅԱՆԸ Ո՛Չ ՀԵՐՔԵՑ, Ո՛Չ ՀԱՍՏԱՏԵՑ

«Հայաստանում եթե երբեւէ եղել է ընտրովի արդարադատություն, ապա դա վաղուց պատմություն է»,- նոյեմբերի 1-ին ԱԺ-ի բակում լրագրողների հետ զրույցում ասաց ՔԿ նախագահ Արգիշտի Քյարամյանը՝ պատասխանելով «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հարցին:

«Եթե կան կոնկրետ, ուղիղ դեպքեր, որոնք Ձեզ հետաքրքրում են, ընդ որում՝ եթե ես ճիշտ հասկացա, Ձեր վկայակոչած դեպքերի մի մասը դեռեւս քննության փուլում են, մի մասով չեմ բացառում, որ քննությունն ավարտվել է»,- ասաց ՔԿ նախագահը:

ՔՊ-ական Արթուր Հովհաննիսյանի հրապարակային արած «ականջդ կկտրեմ», «լեզուդ կկտրեմ» արտահայտություններին եւ հարցին՝ արդյոք դրանք քրեորեն պատժելի չեն, Քյարամյանը խուսափեց պատասխանելուց. «Կոնկրետ դեպքի չեմ ուզում անդրադառնալ: Ես հաստատ կաշկանդված չեմ: Ես կխնդրեմ, որ կոնկրետ հարցում ուղարկեք, վստահեցնում եմ՝ մանրամասն կներկայացնենք: Քրեական դատավարության օրենսգրքով պետք է լինի հանցագործության հաղորդում, որը կարող են տալ: Կարծում եք՝ ես բոլոր գործերին տիրապետո՞ւմ եմ. բացարձակ տեղեկացված չեմ այդ գործի մասին: Կգնամ, կճշտեմ, կասեմ»:

Անդրադառնալով վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ընդդիմության հասցեին արված հայտարարություններին, օրինակ՝ այն, որ ընդդիմությանը կուղարկի Բաքու, «Վարդաշեն» ՔԿՀ եւ այլն, եւ հարցին՝ արդյոք ՔԿ-ն ուսումնասիրել է այդ հայտարարությունը, Քյարամյանն ասաց. «ՔԿ-ն հայտարարություններ ուսումնասիրելու լիազորություն չունի: Մենք նախաքննական մարմին ենք, իրականացնում ենք բացառապես նախաքննություններ»:

Հարցին՝ ԱՀ ԱԽ նախկին քարտուղար Սամվել Բաբայանը, ԱՀ նախագահ Սամվել Շահրամանյանը հրավիրվել են արդյոք ՔԿ՝ հարցաքննության, Քյարամյանը ո՛չ հերքեց, ո՛չ հաստատեց. «Այդ հարցին չեմ պատասխանի, որովհետեւ կան վարույթներ, որոնցով նախաքննությունը հրապարակման ենթարկման չէ»:

Անդրադառնալով ՔԿ-ում նախաձեռնված՝ Արցախում տեղի ունեցած ռազմական հանցագործությունների առնչությամբ նախաձեռնված վարույթներին՝ Քյարամյանն ասաց. «Խոսքը վերաբերում է բացառապես էթնիկ զտման համատեքստում հարուցված քրեական գործին, որովհետեւ ՔԿ-ն Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածի վերաբերյալ քննություն իրականացնելու իրավասություն չունի: Կան միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներ, օրինակ՝ ագրեսիվ պատերազմ, պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, այդ թվում՝ էթնիկ զտումը, որը ցեղասպանության հանցակազմի տարր է, որը մեր ազգի հետ տեղի ունեցավ, դրա վերաբերյալ կա հարուցված քրեական վարույթ: Դա վերաբերում է ինչպես մինչեւ ռազմական գործողությունները տեղի ունեցած իրողություններին (խոսքը 2022-ի դեկտեմբերից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակմանը եւ այդկերպ էթնիկ զտման համար նախադրյալներ ստեղծելու մասին է), այնպես էլ դրանից հետո ականատես եղանք, որ կարճ ժամանակահատվածում մեր ազգաբնակչության 100 հազար ներկայացուցիչներ լքեցին իրենց բնօրրանը՝ ստիպված լինելով, մահվան սպառնալիքի տակ»:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից գերեվարման դեպքերին՝ Քյարամյանն ասաց. «Քննություն պետք է անենք: Կան նաեւ ոչ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գերեվարված են, եւ այդ անձանց գերությունը հաստատված է: Մենք ինտենսիվ զբաղվում ենք եւ՛ բարձրաստիճան պաշտոնյաների, եւ՛ ոչ բարձրաստիճան պաշտոնյաների գերեվարման, խոշտանգման եւ ցանկացած հարցերով, որոնք վերաբերում են մարդկության դեմ ուղղված հանցակազմին»:

Դիտարկմանը, որ երբեք ՔԿ նախագահն այդպիսի ուժեղացված անվտանգություն չի ունեցել, ինչպես այժմ իրենն է, եւ հարցին՝ արդյոք իրեն սպառնում են, Քյարամյանն ասաց. «Ես չեմ հետեւել՝ նախկին նախագահները ինչ անվտանգություն են ունեցել, բայց այս հարցը ես չեմ որոշում: Ինձ բացարձակ չեն սպառնում»:

ՏՎՅԱԼՆԵՐ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Հայաստանում այս տարվա 9 ամիսների ընթացքում արձանագրված կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի թիվը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 482-ով:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումներում:

«Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի 9 ամիսների ընթացքում արձանագրվել է կոռուպցիոն հանցագործությունների 1088 դեպք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 606 դեպքի դիմաց: Այսինքն՝ աճը կազմել է 482 դեպք կամ 79.5 տոկոս»,-ասաց Խաչատրյանը:

Հակակոռուպցիոն կոմիտեում, 9 ամիսների տվյալներով, քննվել է 1498 քրեական վարույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 861 վարույթի դիմաց: Այսինքն՝ վարույթում եղած գործերն ավելացել են 637-ով կամ 74 տոկոսով:

«Իրավական վիճակագրության հանրահայտ կանոնն է, որ հանցավորության վիճակը գնահատելիս կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի աճը պետք է դիտարկել որպես դրական երեւույթ: Այսինքն՝ տվյալ դեպքում մենք ունենք ոչ թե կոռուպցիոն դեպքերի իրական աճ, այլ կոռուպցիոն դեպքերի բացահայտման աճ»,-ասաց Խաչատրյանը՝ սա համարելով Հակակառուպցիոն կոմիտեի գործունեության ցուցանիշ:

9 ամիսների կտրվածքով մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 134 քրեական վարույթ՝ 286 անձի վերաբերյալ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդ թիվը եղել է 68՝ 166 անձի դիմաց: Այսինքն՝ այս տարվա 9 ամսում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված վարույթների թիվը, նախորդ տարվա 9 ամիսների համեմատ, ավելացել է 66-ով կամ 97 տոկոս, իսկ դատի տրված անձանց թիվը՝ 120-ով կամ 72 տոկոսով: Ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով կարճվել է 25 վարույթ՝ 122 անձի նկատմամբ՝ նախորդ տարվա 11 վարույթ՝ 45 անձի դիմաց:

«Դատարան ուղարկված գործերով 286 անձանցից 52-ը մեղադրվել են կաշառք ստանալու, 117-ը՝ կաշառք տալու, 9-ը՝ կաշառքի միջնորդության համար, 14-ը մեղադրվել են պաշտոնական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու համար: 15-ը մեղադրվել են պաշտոնական կեղծիքի համար, 58-ը՝ պաշտոնական դիրքի օգտագործմամբ հափշտակության համար, 3-ը՝ փողերի լվացման, 18-ը կոռուպցիոն հանցանքներ կատարելու համար»,-ասաց Խաչատրյանը՝ այս ցուցանիշները համարելով աննախադեպ:

ՏԵՂԵԿԱՏՎԱՆՔ

ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ԻՐԱՑՐԵԼ

2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում՝ Կառավարական տուն 1 հասցեի դիմաց կազմակերպված զանգվածային անկարգությունների մասնակից Մ.Ա.-ն քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ձեռք է բերել եւ իրացնելու նպատակով իր մոտ պահել 3,78 գրամ քաշով Մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Դատախազությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ դատախազը 2023 սեպտեմբերի 20-ին Մ.Ա.-ի նկատմամբ հարուցել էր հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով (իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը կամ, մեկ ուրիշի դրդմամբ, նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի ձեռք բերելը):

2023 թվականի սեպտեմբերի 21-ին Մ.Ա.-ին ներկայացվել էր մեղադրանք: Նրա նկատմամբ, որպես խափանման միջոց, կիրառված է կալանքը:

Դատախազը 2023 թվականի հոկտեմբերի 30-ին հաստատել է Մ.Ա.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նշենք, որ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին հարուցված քրեական վարույթի նախաքննությունը՝ զանգվածային անկարգություններին մասնակցելու եւ զանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչեր հնչեցնելու հոդվածներով, շարունակվում է:

ԱՌԳՐԱՎԵԼ ԵՆ ՀՐԱՑԱՆԸ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Շիրակի մարզում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ախուրյան բնակավայրի 13-ամյա անչափահաս տղան «Տիր» տեսակի հրացանով կրակել է գետնին, որի արդյունքում մետաղյա փամփուշտը հետ հարվածով դիպչել է 11-ամյա անչափահաս աղջիկ երեխայի կրծքավանդակի աջ մասին, որի հետեւանքով վնասվել է աղջիկ երեխայի թոքը:

11-ամյա աղջկա վիճակը ծանր է: Իրավապահները առգրավվել են հրացանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 5 հետախուզվող: Կամավոր ներկայացել է 1 հետախուզվող:*

ՄԱՐԶ

ՃՈԽ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՂ ՄԱՐԶՊԵՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 9-ին տեղեկատվական հարցում է ուղարկել վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին: Մարզպետը գրավոր պատասխանել է, թե հարցմանը պատասխանելու համար լրացուցիչ աշխատանքի կարիք կա, հարցմանը կպատասխանի մեկամսյա ժամկետում: Այդ ժամանակահատվածն էլ, սակայն, բավարար չի եղել, որպեսզի նա լիարժեք պատասխանի հարցերին: Հոկտեմբերի 31-ին մարզպետարանից ստացել եմ հարցմանս կիսատ-պռատ պատասխան: Տեղեկատվական հարցման մեջ, ի թիվս այլ հարցերի, հարցապնդում է-ինք արել՝ սեպտեմբերի 23-ից մինչեւ հոկտեմբերի 8-ը կայացած ուսուցիչների կամավոր ատեստավորմանը Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների քանի ուսուցիչ է մասնակցել, նրանցից քանիսը ինչ արդյունքներ է ունեցել: Մարզպետի պատասխանի մեջ նշված է. «Քանի որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները կամավոր ատեստավորմանն իրենք են հայտագրվում, հետեւաբար մենք չունենք նման տեղեկատվություն: Արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն կունենանք նոյեմբերի սկզբին»: Մարզպետարանը համապատասխան նախարարությունների հետ միայն երկու ոլորտ է ղեկավարում՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի պետական առողջապահական հիմնարկները: Մարզպետը տեղյակ չէ 23 օր առաջ ավարտված տավուշցի ուսուցիչների ատեստավորման արդյունքներից. այդ տվյալները նա կարող էր ստանալ ԿԳՄՍ նախարարությունից կամ իր իսկ ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների տնօրեններից: Նման վատ աշխատանքի համար այս տարվա ընթացիկ ժամանակաշրջանում մարզպետ Հ. Ղալումյանը եւ մարզպետարանի պաշտոնյաները աղքատ, վարկերի տակ կքած Հայաստանի պետական բյուջեից ավելի քան 56 միլիոն դրամ պարգեւավճար են ստացել:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻՑ

Նոյեմբերյանի համայնքապետարանից հայտնում են, որ Արցախից տեղահանված, ներկայումս Նոյեմբերյան համայնքում բնակվող մեր հայրենակիցների՝ 3 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող 28 ընտանիքների՝ 150.000-ական դրամ, 6 եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող 2 ընտանիքների 300.000-ական դրամ աջակցություն է ցուցաբերել Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայերի միությունը: Վերջերս Ռոսաստանի Տուլա քաղաքի հայ համայնքի բարերարությամբ Արցախից բռնի տեղահանված եւ Նոյեմբերյան համայնքում վերաբնակեցված՝ չորս եւ ավելի երեխաներ ունեցող 20 ընտանիքների տրվեց հարյուր հազարական դրամ օգնություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՈՒ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

Մի շարք մարմինների բյուջեները նախատեսվում են վարչապետի աշխատակազմի տողով. դրանք են տեսչական մարմինները, ԱԽ գրասենյակը, քաղծառայության գրասենյակը, տեսչական մարմինների համակարգման գրասենյակը, Մարդու իրավունքների եվրոպական ներկայացուցչի գրասենյակը, Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին նոյեմբերի 1-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց Կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանը՝ անդրադառնալով նրան, որ 2024թ.-ի բյուջեով վարչապետի աշխատակազմի ծախսերն ավելացվել են;

«Այսինքն՝ այդ 24,5 մլրդ դրամը նախատեսված է այս բոլոր մարմինների գործունեության ապահովման համար»,- ասաց նա:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ խոսելով ծառայողական ավտոմեքենաների կրճատումից՝ Արմենակ Խաչատրյանն ասաց, որ դա կառավարության ստանձնած հանձնառությունն է, որը հստակ քայլ առ քայլ առաջ է գնում:

«Ինչ վերաբերում է վարչապետի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների թվի կրճատմանը, ես այս պահին կոնկրետ թիվը չեմ հիշի, բայց անցած տարի 70 կամ ավելի մեքենաներից հիմա 40 ավտոմեքենա կա վարչապետի աշխատակազմում: Ընդ որում՝ այդ 40-ի մեջ միայն ծառայողական մեքենաներ չեն. այնտեղ կան նաեւ ավտոբուսներ, որոշակի տրանսպորտային միջոցներ: Կոնկրետ ծառայողական ավտոմեքենաները, այնպիսին, ինչպիսին դուք եք հասկանում, վարաչպետի աշխատակազմի բալանսում վարչապետին սպասարկող մեքենան է, փոխվարչապետներին սպասարկող մեքենաներն են, վարչապետի աշխատակազմի ղեկավարին սպասարկող մեքենան է, ԱԽ քարտուղարին սպասարկող մեքենան է, նախկին նախագահներին սպասարկող մեքենաներն են: Մնացածը հերթապահ սպասարկող ավտոմեքենաներ են, որոնցից, ըստ անհրաժեշտության, օգտվում են աշխատակազմի բոլոր աշխատակիցները, այդ թվում՝ ես:

Օրինակ՝ այսօր ես եւ իմ գործընկերները համապատասխան զեկուցագրի հիման վրա մեզ տրամադրված մեքենայով եկել ենք ԱԺ եւ այստեղից գնալու ենք վարչապետի աշխատակազմ: Ես այդ մեքենայով տուն չեմ գնում, տնից աշխատանքի չեմ գնում»,-ասաց նա:

Հարցին, թե արդյոք Նիկոլ Փաշինյանին սպասարկող ուղեկցող մեքենաների թիվը 10-ով ավելացել է, Արմենակ Խաչատրյանը պատասխանեց. «Ոչ, չի ավելացել 10-ով: Ես գիտեմ՝ այդ հարցը որտեղից է գալիս, կառավարության 1666 որոշման մասին է խոսքը: Մենք այդ որոշմամբ հստակ սահմանափակել ենք ծառայողական ավտոմեքենաների օգտագործումը: Այսինքն՝ կառավարության որոշումով սահմանափակվել է, թե որոնք են ծառայողական ավտոմեքենաները:

Դա նոր որոշում է, նախկինում չի եղել, որ ասում եք՝ 10-ով ավելանում է: Բոլոր մարմինների համար նախատեսված է յուրաքանչյուր 100 աշխատողի կտրվածքով մեկ սպասարկող կամ հերթապահ ավտոմեքենա: Հաշվի առնելով, որ վարչապետի աշխատակազմում կա առանձնահատկություն, այսինքն՝ վարչապետի այցերն են կազմակերպվում, օրինակ՝ մարզ այցելության ժամանակ կոնկրետ աշխատակազմ պետք է վարչապետի հետ գործուղվի, ապա այդ դեպքում վարչապետի աշխատակազմը անհրաժեշտություն ունի որոշակի տարբերվող թվաքանակով մեքենաներ ունենալու:

Բայց այդ 10 մեքենաները մտնում են իմ նշած 40 ավտոմեքենաների մեջ, որը անցած տարի է նվազեցվել, դարձել 40: Հաջորդ տարի այս թիվը կամ կմնա նույնը, կամ կկրճատվի: Նորից եմ ասում՝ դրանք ծառայողական ավտոմեքենաներ չեն, որեւէ կոնկրետ անձի համար նախատեսված չեն, բխում են որոշակի գործառույթի կատարումից»:

Հարցին, թե արդյոք վարչապետի աշխատակազմին սպասարկող նաեւ հեծանիվ կա, Արմենակ Խաչատրյանն արձագանքեց. «Ես համարեմ, որ չեմ լսել ձեր հարցը»:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՏԿԱՑՎԵՑ ՊԵՏԲՈՒՋԵԻՑ

Հայաստանի նախագահի աշխատակազմի համար 2024 թվականի պետական բյուջեի նախագծով հատկացվել է 1 միլիարդ 771 միլիոն 663 հազար դրամ, ինչը 3 միլիոն 34 հազար դրամով ավելի է՝ 2023 թվականի համեմատ: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման ժամանակ այս մասին ասաց Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Խաչատուր Պողոսյանը:

«Նախագահի աշխատակազմի կանոնադրական լիազորությունների իրականացման համար 2 միջոցառումներով 1 ծրագրի համար 2024 թվականի համար ներկայացրել է 1 միլիարդ 771 միլիոն 663 հազար դրամի բյուջետային հայտ՝ 2023 թվականի 1 միլիարդ 686 միլիոն 361 հազար դրամի փոխարեն: Տարբերությունը կազմում է 3 միլիոն 34 հազար դրամ, որը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատանքային ստաժի հետ կապված աշխատավարձի բնականոն աճով եւ աշխատակազմի համար նոր ցանցային սարքավորումների եւ հեռահաղորդակցության համակարգի ձեռքբերմամբ: Հին համակարգը շահագործվում է ավելի քան 25 տարի, տեխնիկապես մաշված վիճակում է եւ աշխատում է անընդհատ խափանումներով, իսկ վերանորոգման ծախսերը բացարձակապես անարդյունավետ կլինեն: Նոր ցանցային սարքավորումների եւ հեռահաղորդակցման համակարգի շնորհիվ կբարձրանա նախագահի աշխատակազմի գործունեության, ինչպես նաեւ պետական մարմինների, քաղաքացիների ու լրատվամիջոցների հետ փոխգործակցության որակն ու արդյունավետությունը»,- նշեց Պողոսյանը:

Նրա խոսքով՝ 2024 թվականի աշխատակազմի համար նախատեսված բյուջեի շուրջ 95,16 տոկոս նախատեսված է հանրապետության նախագահի գործունեության եւ ներկայացուցչականության ապահովման միջոցառման համար, իսկ 4,84 տոկոսը՝ նախագահի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավման համար:

2024 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստում ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը հայտարարեց, որ Հայաստանի պետական վերահսկողական ծառայության կարիքները հոգալու համար 2024 թվականին պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 956 մլն դրամ:

Սա, ըստ նրա, 477 մլն դրամով պակաս է 2023 թվականի հատկացումից:

«Կապիտալ ծախսերը կկազմեն ընդամենը 4 մլն 693 հազար դրամ: Մնացած միջոցները կուղղվեն ընթացիկ ծախսերին»,- ասաց Հովհաննիսյանը: Բաժինը պետք է իրականացնի ընդամենը 1 ծրագիր՝ 3 գործունեությամբ:

● Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է կողոպուտի 2, մարմնական վնասվածք պատճառելու, խարդախության եւ ավտոմեքենայի գողության՝ 1-ական դեպք:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Այասի փողոց, 10/1 հասցեում գտնվող 3306,9 քմ հասարակական համալիր եւ 0,113629 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 1720000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 20.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՀԱՏԿԱՑՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԵՑԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Հայաստանի Ազգային ժողովի աշխատակազմի պահպանման համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել շուրջ 7,2 մլրդ դրամ: Այս մասին Ազգային ժողովում նոյեմբերի 1-ին՝ 2024 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում հայտարարեց Հայաստանի խորհրդարանի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը:

Սա, նրա խոսքով, 1,5 տոկոսով ավելի է, քան 2023թ.-ին էր: «6,1 մլրդ դրամ կուղղվի Ազգային Ժողովի գործունեությանը, ինչպես նաեւ ներկայացուցչական ծախսերին եւ օրենսդրական աշխատանքներին: Կադրերի պատրաստման համար կծախսվի 1,3 մլն դրամ, խորհրդարանի դերի բարձրացման համար՝ 50,3 մլն դրամ, միջազգային խորհրդարանական կառույցներում անդամավճարների համար՝ 123,9 մլն դրամ, խորհրդարանական ուժերին աջակցելու համար՝ 520,7 մլն դրամ, տեխնիկական վերանորոգման համար՝ 175,7 մլն դրամ, եւ Ազգային Ժողովի շենքի պայմանները բարելավելու համար՝ 191,5 մլն դրամ»,- պարզաբանեց Առաքելյանը:

Նա նաեւ հավելեց, որ 2024 թվականին կավելանան խորհրդարանի տեխնիկական հագեցվածության ծախսերը, ինչպես նաեւ կբարելավվեն բուն շենքի պայմանները: Խոսքը, մասնավորապես, հեռախոսի եւ ինտերնետի մալուխների, ինչպես նաեւ էլեկտրական ցանցի վերանորոգման եւ փոխարինման մասին է:

Պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ խորհրդարանական մշտական հանձնաժողովների համատեղ նիստում վարչության պետ Գրիգոր Մինասյանն էլ հայտարարեց, որ 2024 թվականին Հայաստանի արդարադատության նախարարության կարիքների համար պետբյուջեից կհատկացվի 23,2 մլրդ դրամ:

Ըստ նրա՝սա 2023 թվականի ցուցանիշներից պակաս է 2,2 մլրդ դրամով: «Գումարների կրճատումը պայմանավորված է նրանով, որ նախարարությունը չի նախատեսում դատարանների շենքերի կառուցում կամ վերանորոգում»,- պարզաբանեց Մինասյանը: Դե իսկ Հայաստանի Սահմանադրական դատարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսում է հատկացնել 844 մլն դրամ, որը 11 մլն դրամով ավելի քիչ է, քան 2023-ին: Այս մասին հայտարարեց Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Սամվել Առաքելյանը:

Նրա խոսքով՝ միջոցների 90 տոկոսը ուղղվելու է աշխատավարձերի եւ հավելավճարների վճարմանը: Մնացած 10%-ը ՍԴ գրասենյակն օգտագործելու է շենքի պահպանման եւ կոմունալ վճարումների համար:

«Աստիճանաբար ավելանում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան դիմումների թիվը: Սա, իմ կարծիքով, վկայում է դատարանի նկատմամբ վստահության բարձրացման մասին»,- հավելեց Առաքելյանը:

Աշխատակազմի ղեկավարը նշեց, որ 2023 թվականին Սահմանադրական դատարանը ստացել է 105 դիմում ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից: Կառավարությունից դատարանը ստացել է 19 դիմում, նախագահից՝ 1, պատգամավորներից՝2, դատարաններից՝6:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն այլ կառույցների, Սահմանադրական դատարանը 2024 թվականի համար պահանջել է 2,1 մլն դոլար, այսինքն՝ 27,5 հազար դոլարով պակաս, քան 2023 թվականին:

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

ՀԵՌԱՑՐԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նոյեմբերի 1-ին վերադառնում է աշխատանքի 3-օրյա արձակուրդից հետո:

Մինչ արձակուրդ գնալը նա հասցրեց պաշտոնից հեռացնել Թումանյանի թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանին, որը, ըստ նախարարության, առանց որեւէ որոշման մի քանի օրով լքել էր Հայաստանը եւ մեկնել էր Հարավային Ամերիկա: Այցը ֆինանսավորվել էր տեղի հայկական համայնքի կողմից, սակայն ԿԳՄՍՆ արգելել էր նրան մեկնել՝ պատճառաբանելով ոչ բավարար ֆինանսական միջոցները: Այցի նպատակն էր թումանյանական շունչն ու ոգին տեղի հայկական համայնքում տարածելը եւ նրանց Թումանյանի վաստակի հետ ծանոթացնելը:

ԿԳՄՍ նախարարությունն առաջին անգամ չէ, որ մշակութային ոլորտում գործողություններ ծավալող անձանց դնում է որոշակի սահմանափակումների եւ արգելանքների դեմ:

Նմանատիպ գործողությունները դատապարտելի են:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հրապարակային ծանուցում՝ աճուրդի մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 21.11.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24, 26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մեկնարկային գին՝ 560,481 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝makar@bankruptcy.am)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՄԵՐԳ

ՄՆՈՒՓ ԴՈԳԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանը չի կարող ասել, թե կոնկրետ երբ տեղի կունենա ամերիկացի հայտնի ռեփեր Սնուփ Դոգի (Snoop Dogg) համերգը Երեւանում, որը նախատեսված էր սեպտեմբերի 23-ին, սակայն հետաձգվել է:

«Ես հիմա չեմ կարող կոնկրետ օր նշել, բայց ամեն ինչ արվում է, որ գա», - ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց նա:

Հարցին՝ ինչու է դա մեկ անձից գնումով իրականացվել, կամ եթե դրամաշնորհ է հայտարարում կառավարությունը, ինչու բաց մրցույթ չի հայտարարվում, Արմենակ Խաչատրյանը պատասխանեց. «Կոնկրետ այս դեպքում շատ կոնկրետ առանձնահատկություն կա: Կոնկրետ կազմակերպությունը պայմանավորվածություն է ձեռք բերել արտիստի հետ, ջանք էր գործադրել, որից հետո դիմել էր կառավարությանը աջակցության խնդրանքով: Կառավարությունն էլ որոշել էր չմերժել»:

Լրագրողի հարցին՝ կենսական էր արդյոք այդ համերգը կազմակերպել սոցիալական այս ծանր իրավիճակում, Խաչատրյանը պատասխանեց. «Ցանկացած միջոցառում, որ կառավարությունը նախատեսել է անել, այո՛»:

Ի դեպ, հարցին անդրադարձել էր նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: Նա ասել էր՝ եթե Սնուփ Դոգի գալիք համերգը տեղի ունենա, այն պետք է լինի բաց բոլորի համար:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեռեւս սեպտեմբերի 23-ին «Հրազդան» մարզադաշտում պետք է կայանար Սնուփ Դոգի երեւանյան համերգը, որի համար պետբյուջեից հատկացվել էր 6 միլիոն դոլար: Նախատեսված համերգից օրեր առաջ՝ սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանը սանձազերծեց հերթական անմարդկային գործողություններն Արցախի ու արցախցիների դեմ: Արցախահայությունը ստիպված էր բռնի կերպով լքել իր հայրենիքը, ավելի ուշ էլ՝ սեպտեմբերի 28-ին, Սամվել Շահրամանյանը ստորագրեց մի փաստաթղթի տակ, համաձայն որի՝ Արցախի Հանրապետությունը հունվարի 1-ից այլեւս գոյություն չի ունենա:

Այս ամենի ֆոնին անհանգստության ու մտահոգության ալիք էր բարձրացրել Սնուփ Դոգի երեւանյան համերգը: Մարդիկ պահանջում էին չեղարկել այն: Համերգը կազմակերպող ընկերությունը՝ «Դոպինգ Սփեյս»-ը, հանդես եկավ հայտարարությամբ, որից պարզ դարձավ, որ համերգը հետաձգվում է անորոշ ժամկետով:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ ռեփերը գումարն ամբողջությամբ ստացել է, բայց կգա եւ «անվճար» կերգի, երբ ազատ օրեր ունենա իր գրաֆիկում:

Այս տեղեկությունից հետո բոլորին համակեց տեւական լռությունը. կարծես Հայաստանի պետբյուջեից չէ, որ հսկայական գումար է հատկացվել միջոցառման համար, որն այդպես էլ չկայացավ, եւ դեռ հարց է՝ կկայանա, թե ոչ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս պահին էլ բանակցություններ են ընթանում Սնուփ Դոգի հետ համերգի կայացման համար, սակայն թե ինչ արդյունքներ կտան այդ բանակցությունները, անհայտ է:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց համերգը կազմակերպող ընկերության՝ «Դոպինգ Սփեյս»-ի հիմնադիր Հայկ Սիմոնյանի հետ՝ պարզելու համար, թե արդյոք կա հստակեցում այս մասով. «Առաջիկայում հանդես կգանք հայտարարությամբ, այս պահին ոչինչ հստակ ասել չեմ կարող»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սիրուշոն ներկայացրել է արծաթյա զարդերի իր բրենդի՝ PreGomesh-ի նոր՝ գոտիների հավաքածուն, ու ներկայացրել հերոսուհու պատմությունը:

Նա գրել է, որ գովազդային հոլովակում նկարահանված Լիլիան ծնվել եւ մեծացել է Արցախում: «Նա իր 2 ամսական որդուն՝ Մոնթեին գրկած 40 ժամ դժվարություններով լի ճանապարհ է անցել՝ թողնելով իր տունը: Նրա աչքերում պայքար է, ցավ, բայց նրան կոտրել հնարավոր չէ»,-հավելել է երգչուհին:

Տեսանյութը նկարել է Գեորգի Ալեքսանյանը, որը Ստեփանակերտից է: «Ինքն իր մեջ պայքարում է այն մտքի հետ, որ տուն՝ Ստեփանակերտ, այլեւս չի կարողանալու գնալ,-պատմել է Սիրուշոն:-Լինի թե՛ զարդ, թե՛ երգ, այն, ինչ ստեղծում եմ, հենց այսպիսի մարդկանց մասին է՝ հայի այս տեսակից ոգեշնչված, որը որքան էլ ջղայնացած եւ հիասթափված, բայց շարունակում է լավը ստեղծել եւ առաջ մղվել»:

ԿՑՈՒՑԱԴՐՎԻ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Հայ կինոյի հիմնադիր Համո Բեկնազարյանի «Խաս Փուշ» ֆիլմը, որը նկարահանվել է 1928 թվականին, 35 մմ ժապավենային տարբերակով նոյեմբերի 3-ին եւ 13-ին կցուցադրվի Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանում (MoMa):

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հայտնում է Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

Կինոկենտրոնը MoMa-ի հետ համագործակցության արդյունքում ցուցադրության նպատակով թանգարանին է տրամադրել իր արխիվում պահվող ֆիլմի ժապավենը:

«Խաս Փուշ»-ը հայկական երկրորդ ֆիլմն է, որ ցուցադրվելու է աշխարհի հեղինակավոր թանգարաններից մեկում: Առաջինը ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի «Հակոբ Հովնաթանյան» (1967թ.) վերականգնված ֆիլմի նոր՝ 35 մմ ժապավենային տարբերակն էր, որը ցուցադրվել է 2021 թվականի հունվարին: Ֆիլմի մեկ օրինակը պահպանության է հանձնվել Նյու Յորքի Ժամանակակից արվեստի թանգարանին:

ԳՏՆՎՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանաբնակ վիզաժիստ Գոհար Ավետիսյանն այս օրերին գտնվում էր Հայաստանում: Նա եկել էր այստեղ՝ նշելու քրոջ՝ Նունիկի ծննդյան տարեդարձը:

Ծննդյան խնջույքից հետո Գոհարը մեկնել է նաեւ Գեղարքունիքի մարզ՝ իր ծննդավայր:Ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում Սեւանա լճից հրապարակելով լուսանկար՝ կից գրել է. «Բոլորին բարեւ... իմ սիրելի՛ Սեւան»:

Հաջորդիվ հրապարակելով տեսանյութ՝ գրել է. «Երեւանում ինքս ինձ ընթրիքի էի հրավիրել, հաջորդ օրը՝ ճաշի, ինքս իմ մտքերի հետ: Առաջ մտածում էի, որ կյանքում երբեք չեմ կարողանա հաճույքով ինչ-որ բան միայնակ անել: Տարիների հետ հասկանում ես, որ կարող ես»:

Հավելենք նաեւ, որ երեկ Գոհարն արդեն հետ վերադարձավ:

Մ. Ղ.

ՍՊՈՐՏ

ԱՐԺԱՆԻ ԷՐ ՈՍԿԵ ԳՆԴԱԿԻ

Աշխարհի չեմպիոն, «Ոսկե գնդակի» դափնեկիր, 62-ամյա գերմանացի Լոտար Մատեուսը աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի եւ ամերիկյան «Ինտեր Մայամիի» 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսիին արժանի չի համարում «Ոսկե գնդակին» 2022-2023 թվականների մրցաշրջանի արդյունքում:

«Ամբողջ մրցաշրջանի ընթացքում Էրլինգ Հոլանդը շատ ավելի լավն էր, քան Մեսին: Այս անգամ էլ ապացուցվեց, որ հաղթանակն աշխարհի առաջնությունում կարեւոր է մնացած ամեն ինչից:

Նախորդ 12 ամիսներին Հոլանդից ավելի լավ ոչ ոք չի եղել, եւ նա էր արժանի «Ոսկե գնդակին»: Նա «Սիթիի» հետ նվաճեց կարեւոր տիտղոսներ, սահմանեց Պրեմիեր լիգայի ռեկորդ գոլերի քանակով: Մեսիի հաղթանակը ֆարս է, թեեւ ես միշտ եղել եմ Լեոյի ֆանատը»,- Մատեուսի խոսքը մեջբերում է Football Italia-ն:

Մեսին 8-րդ անգամ արժանացավ աշխարհի լավագույն ֆուտբոլիստի մրցանակին:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ԱՐՁԱԳԱՆՔԵՑ

«Ալ Նասրի» 38-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն սոցիալական ցանցերում արած գրառումով արձագանքել է Սաուդյան Արաբիայի թագավորի գավաթի խաղարկության 1/8 եզրափակիչում տարած հաղթանակին:

«Հրաշալի թիմային ոգի: Մեր երկրպագուների անհավանական աջակցությունն օգնեց պայքարել մինչեւ վերջ»,- գրել է Ռոնալդուն:

«Ալ Նասրը» սենեգալցի հարձակվող Սադիո Մանեի գոլի շնորհիվ լրացուցիչ ժամանակում 1:0 հաշվով հաղթել էր «Ալ Իթիֆակին» եւ դուրս եկել քառորդ եզրափակիչ:

ՉԻ ԿԱՐՈՂ ՎՃԱՐԵԼ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնան» հաջորդ ամռանը կփորձի համաձայնության հասնել Մադրիդի «Աթլետիկոյի» հետ պորտուգալացի հարձակվող Ժոաու Ֆելիշի վարձակալության պայմանագիրը եւս մեկ մրցաշրջանով երկարաձգելու հարցում. հաղորդում է Sport Espana-ն:

«Բարսելոնան» Ֆելիշի տրանսֆերը ձեռք բերելու ցանկություն ունի, սակայն «Աթլետիկոն» պահանջում է առնվազն 80 միլիոն եվրո, ինչի հնարավորությունը կատալոնական ակումբը հիմա չունի: Ֆելիշի վարձակալության պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

Ընթացիկ մրցաշրջանում Ֆելիշը իսպանացի Չավիի գլխավորած թիմի հետ մասնակցել է 11 հանդիպման, խփել 3 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում:

● *Նոյեմբերի 3-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գիշատիչների խնջույքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԲՈՂՈՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս բողոքել հյուպատոսական բաժնի աշխատակիցների վերաբերմունքի կամ դիմումի հանձնման գործընթացի դեմ:

Էրիկ Շմավոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շենգեն-վիզայի համար դիմող անձինք պատուհանի մոտ սպասարկման առնչությամբ հյուպատոսական բաժնի աշխատակիցների վերաբերմունքի կամ դիմումի հանձնման գործընթացի վերաբերյալ իրենց բողոքները կարող են ներկայացնել կոնտակտային ձեւաթղթի միջոցով: Խնդրում ենք կոնտակտային ձեւաթղթում որպես հասցեատեր ընտրել Beschwerde zum Schengen-Visum-Verfahren տարբերակը: Ընդ որում՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ բողոքները կարող են ներկայացվել միայն գերմաներեն կամ անգլերեն: Այլ լեզուներով ներկայացված բողոքները չեն կարող քննության առնվել: Այլ հարցերով բողոքները չեն կարող քննության առնվել նշված էլ-փոստի հասցեի միջոցով: Խնդրում ենք կոնտակտային ձեւաթղթի Betreff («Առնչություն») դաշտում նշել հետեւյալ տարբերակը.

«Բողոք վիզայի դիմումներն ընդունելիս կամ հեռախոսային խորհրդատվության ընթացքում աշխատակիցների ցուցաբերած վարքի վերաբերյալ»:

ՀՀ-ում Գերմանիայի դեսպանատուն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բողոքների համար նախատեսված կոնտակտային ձեւաթղթերը նախատեսված չեն վիզա չտրամադրելու, վիզան չեղյալ համարելու կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքարկումներ (ռեմոնստրացիա) ներկայացնելու համար:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե երեխայի ավագ եղբայրը կամ քույրը հաճախում են տվյալ դպրոց, ապա նրան որեւէ արտոնություն տրվո՞ւմ է:

Մովսես Երիցյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ցանկացած ծնող իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը եւ կրթության ձեւը: Հետեւաբար, որեւէ չափանիշ՝ ներառյալ բնակավայրին կամ աշխատանքի վայրին մոտ գտնվելու կամ տվյալ դպրոց հաճախող քույր կամ եղբայր ունենալու փաստը, չի կարող որեւէ երեխայի գրանցման համար առաջնահերթություն ապահովել:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ցանկանում եք, որ Ձեր երեխան սովորի հենց Ձեր նախընտրած դպրոցում, ապա հարկավոր է հնարավորինս շուտ գրանցվել առցանց համակարգի միջոցով, քանի դեռ տվյալ դպրոցի համար սահմանված տեղերը չեն սպառվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Շուրջ մեկ ամիս է՝ Բրազիլիայի հրապարակի՝ Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում դիտահորը վնասվել է, ջուրը հոսում է, մեքենաներն էլ, հատկապես՝ գիշերային ժամերին, ցածր տեսանելիության պայմաններում վնասվում են: Պարբերաբար վնասված այս դիտահորի շրջակայքում տարբեր առարկաներ են դրվում՝ որպես զգուշացում: Ի սկզբանե հատուկ ժապավեն էր, ավելի ուշ՝ մեքենաների անվադողեր:

Քաղաքացիները «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են դիմում ահազանգով, որ պարբերաբար փորձել են կապ հաստատել եւ լուծում պահանջել քաղաքապետարանից, Ջրմուղից, սակայն ապարդյուն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 8 +12 + 16
Կոտայքի լեռներ	+ 4 + 8 +12 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +16 + 20
Գեղարքունիք	+ 3 + 7 + 8 + 13
Լոռի	+ 8 + 13 +18 + 23
Տավուշ	+ 10 + 15 +20 + 25
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 21

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 10 +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 23
Սյունիքի հովիտներ	+14 + 18 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 12 +17 + 21
ԼՂՀ	+ 9 + 12 +23 + 25
Երեւան	+ 9 + 11 +22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.11.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*